

ԳԼՈՒԽ Է ՅՈՒՓՍԻՄԷ ՏԻԿԻՆ

Բզնունեաց ծովուն արեւելեան հիւսիսային ծայրը Առբերունի գաւառին գլխաւոր քաղաքը Բերկրի, այն մեր յիշեալ ժամանակներս գեղեցիկ քաղաք մ'եր իր զօրաւոր բերդով, որ բլրոյ վրայ կը բարձրանար:

Այդ բերդը բնակութիւն էր Արծրունի իշխանաց, որ կը տիրէին Վասպուրականի ընդարձակ գաւառին եւ օրաւոր կ'ընդարձակէին իրենց տերութիւնը փոքրիկ նախարարութիւններն անհետացնել ջանալով: Դիւանագիտութիւն բառը, եթէ չի կար՝ բայց իրը միշտ կար, եւ Արծրունի ժառանգ իշխանը իր խանձարուրներէն գիտէր, թէ ի՞նչ պէտք էր ընել ըստ պարագային յափշտակելու իւր դրացեաց ժառանգութիւնը եւ զօրութիւնը օրաւոր մէկ ձեռաց մէջ ամփոփելու համար: Եւ քանի որ Յայաստան երկրի վրայ թշուառութիւն կը զեղանէր, այդ տիրապետութեան ոգին Արծրունեաց մէջ կաճէր, կ'ուռճանար: Եւ այս ժամ անուակներ ուս մէջ կը տեսնուի յայտնի պատմութիւն ունեւ ուզողին, որ Յայաստան երեք մեծ նախարարութեանց սկսէր էր բաժնուելու. Բագրատունեաց, Արծրունեաց եւ Սիւնեաց: Մամիկոնեանք անունով միայն կային: Իսկ Վասպուրականի մէջ Ռշտունիք տեսանք ո՛ր հասեր էին: Ամատունիք, Ընտրունիք, Գնունիք, Զաջբերունիք, Յանունիք, Վահեւունիք, Անձեւացիք հարկատու ճորտեր էին դարձել Արծրունեաց Աշոտ մեծ նախարարին, որ յանդուգն, փառասէր երիտասարդ մ'եր: Իւր մայրը՝ Յովսիսիմէ մեծ տիկին հռչակաւոր սրամտութեամբ, խոհեմութեամբ, ճարտարութեամբ եւ բարեպաշտութեամբ, քոյր էր Բագրատունի մեծ իշխանացն Սմբատայ եւ Բագարատայ: Եւ այն օրէն, որ եղբայրն ընտանեօք դերի գնացեր էր ի Բաղդատ՝ շատ տխուր էր եւ անհանգիստ, վասնզի ի բացառեալ, որ այնպիսի մեծ իշխան ղղթայներու մէջ կը գտնուէր, կը վախէր նաեւ ուրացութենէ, ուստի առանց իր դաւա կաց բան մը իմացնելու, իրեն Յաւատարիմ իշխան մը՝ Խոսրով Ակեացին՝ հնարագետ եւ իմաստուն մարդ ղրկած էր նամակաւ վիճակը